ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱԳՈԳ ԳՅՈՒՂ

Ազատության 1
հեռախոս/0233-6-10-22/

RA ARMAVIR DISTRICT
OF LERNAGOG

Azatutyan 1.
tel. /0233-6-10-22/

Թիվ 117

«14» դեկտեմբերի 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնագոգ գյուղական համայնքի 2011 թվականի նոյեմբեր ամսին արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՍԱՐԳԱՐՅԱՆ

12016-11
14 12 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԳՈԳ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 42

2011թվական նոյեմբերի 1 գ.Լեռնագոգ

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 111-րդ կետը և հիմք ընդունելով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի եզրակացությունը

Որոշում եմ՝

1. Հաստատել «ՄԱՏ ԱՊՁԲ -1/2» ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգի հրավերով գնման արդյունքները:

2.Պարզեցված ընթացակարգի գործընթացին և հրավերի պահանջներին համապատասխան մասնակցության հայտ ներկայացրած քաղաքացի Արման Պետրոսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Լեռնագոգ համայնքի ղեկավար՝ Ս.Մարգարյան

2011 թվական

նոյեմբերի 1

գյուղ Լեռնագոգ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԳՈԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*10 նոյեմբերի 2011թվական* *N 18*

### ՍԱՐԳԻՍ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 159-րդ, 164-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի N1384-Ն որոշմամբ

*ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝*

1. 2011 թվականի նոյեմբերի 10-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնագոգ գյուղական համայնքի ղեկավարին տրամադրել 2011 թվականի ամենամյա արձակուրդ՝ 24/20նվազագույն 4 լրացուցիչ/ աշխատանքային օր տևողությամբ:
2. Աշխատանքի մեջ համարել 2011 թվականի դեկտեմբերի 14-ից:
3. Համայնքի ղեկավարի պարտականությունները դնել տեղակալ Մաքսիմ Հովհաննիսյանի վրա:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ*

2011 թվականի նոյեմբերի 10,

գյուղ Լեռնագոգ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԳՈԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*9 նոյեմբերի 2011թվական* *N 17*

### ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածով, 95-րդ հոդվածի երրորդ մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային կենտրոնի և գործատուի միջև կնքվող աշխատավարձի փոխհատուցման մասին պայմանագիրը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2011 թվականի նոյեմբերի 9-ից Բաղրամյանի ԶՏԿ-ի կողմից գործուղված Անդրանիկ Մարգարյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 1/մեկ/ տարի ժամկետով, նշանակելով նրան հակակարկտային կայանի օպերատորի պաշտոնում:
2. Աշխատավարձը սահմանել ըստ պաշտոնային դրույքաչափի 65 000 /վաթսունհինգ հազար/ դրամ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2011 թվականի նոյեմբերի 9,

գյուղ Լեռնագոգ